

# ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:  
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
Կամ Tiflis. Redaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են  
Խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

### ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Գերմանական կայսրի նոր հայեանքները.—Ներ-  
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի գիծ մեր դպրոցական  
կեանքից. Նամակ Երևանից. Ներքին լուրեր.—  
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հանրապետական Ցրան-  
սիան. Տեղեկութիւններ թիւրքաց չայաստա-  
նից.— Արտաքին լուրեր.— ՀՆՈՒՆԳՐԻՆԵՐ.— ՅԱՅ-  
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նախկին  
ուսանողի յիշողութիւններէն:

### ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՅՄԻ ՆՈՐ ՀԱՅԵԱՆՔՆԵՐԸ

Երբ հանգուցեալ Ֆրիդրիխ III ազատա-  
միտ կայսրը անցեալ տարի վախճանվեց և  
գերմանական գահի վրա նստեց նրա որ-  
դին, այժմեան Վիլհելմ կայսրը, ամենքը ի-  
րաւամբ սպասում էին որ գերմանական  
կառավարութիւնը նորից կը հետեւէ հին,  
յետագէմ, գինուորական, հակաազատամիտ  
քաղաքականութեան, որին հետևում էր  
գերմանական կառավարութիւնը հանգու-  
ցեալ Վիլհելմ I կայսրի ժամանակ, և որի  
զխաւոր ղեկավարող ու ներշնչողը Բիս-  
մարկ իշխանն էր:

Այժմեան կայսրի թագաւորութեան ա-  
ռաջին ամիսները կարծես պէտք է արդա-  
րացնէին այդ գուշակութիւնները: Վիլ-  
հելմ II կայսրը գահը նստելով իր մանի-  
ֆեստներում ջանում էր համակրութիւն  
արտայայտել դէպի իր պապի, և ոչ թէ  
իր հօր քաղաքականութիւնը:

Սակայն վերջին ստացած հեռագրիցները  
մեզ կարծել են տալիս թէ երկուստարդ  
կայսրի իր թագաւորութեան սկզբից այդ  
բռնած ընթացքը ժամանակաւոր էր...  
Այժմ, ըստ երեւոյթի, նա կրկին հակ-  
վում է դէպի աւելի ժամանակակից, աւելի  
ազատամիտ հայեանքները: Նորերում Բիս-  
մարկ իշխանի տանը, պարլամենտական  
ճաշկերպի ժամանակ, որտեղ ներկայ էին  
պատգամաւորներից շատերը, երկուստարդ  
կայսրը, դիմելով պատգամաւորներին, ար-  
տասանեց հետևեալ խօսքերը. «Ես միշտ  
ցանկութիւն եմ ունեցել մտնելու ազդի  
ներկայացուցիչներին, իմ հանգուցեալ  
պապս դեռ ևս խուսափում էր այդ տեսակի

յարաբերութիւններից, բայց ես ներշնչված  
եմ ժամանակակից ոգով»:

Գրանք նշանաւոր խօսքեր են և դրանք  
միմիայն խօսքեր չեն... Ով որ ծանօթ է  
գերմանիայի, մանաւանդ Պրուսիայի պատ-  
մութեան հետ, կը խոստովանվի որ այդ  
երկրի կառավարութիւնը, նրա թագաւոր-  
ներն ու պետական մարդիկ միշտ խնարհ-  
վում էին ժամանակի պահանջմանը և ժա-  
մանակակից ոգուն:

Գեռ 1847 թին Պրուսիան չունէր այն  
ժողովրդական ներկայացուցչութիւնը, այն  
պարլամենտական սիստեմը, որ ունէին ար-  
դէն հարաւային գերմանական պետու-  
թիւնները: Ֆրիդրիխ-Վիլհելմ IV թագա-  
ւորը որք բարձրացաւ պրուսական գահը  
1840 թին, կարական կերպով մերժեց  
երկրի ժամանակակից սահմանադրական  
կազմակերպութիւն տալը: Երկուստարդ  
Բիսմարկ, որը այն ժամանակ պրուսական  
պատգամաւորների ժողովի պատգամաւոր-  
ներից մէկն էր, ամեն տեսակ ազատա-  
մտութեան ամենակատարի հակառակորդ  
էր հանդիսանում, յայտնելով որ արե-  
մտեան եւրոպական սահմանադրութեան  
նման քաղաքական սիստեմը անյարմար է  
Պրուսիայի համար և կորստաբեր կը լինի  
նրա քաղաքական գարգացման համար:

Բայց արդէն 1859 թին, երբ Պրուսի-  
ան վայելում էր սահմանադրական կառ-  
վարութիւն, կոմս Բիսմարկ, որը այն  
ժամանակ պրուսական դեսպան էր Պետեր-  
բուրգում, գրում էր Բերլին, իր ծանօթ  
ղեկավարներին մինչև. «Այժմ ես այն  
կարծիքի եմ, որ սահմանադրութիւնը ան-  
հրաժեշտ է նոյն իսկ Պրուսիայի պէս մի  
աւատական երկրի համար. ժամանակի  
պահանջման դէմ, ինչքան էլ մարդը չը  
համարի ժամանակակից այս կամ այն  
գաղափարին՝ անկարելի է ընթանալ և բո-  
լոր ազդերը ստիպված են վաղ թէ ուշ  
նկատարվել ժամանակի ոգուն»: Ժամանա-  
կակից Գերմանիայի ամենաերեւելի պետա-  
ական մարդու այդ խօսքերը շատ երևաւորիչ  
են Գերմանիայի, մանաւանդ Պրուսիայի  
պատմական քաղաքականութեան համար:

դէպի ներքին մէջ մինչև երկրի հասնող երկուստար-  
դը կամաց կամաց ցած էր իջնում, որ աւարտե-  
լուց և կեանքից մի փոքր հոտ քաշելուց յետոյ՝  
բոլորովին խոյս տար ամեն հասարակական գա-  
ղափարներից և զործերից...  
Այդ բանում, ի հարկէ, անպայման մեղաւոր  
չէ ազէտ հասարակութիւնը: Եւ մասամբ սխալ  
էր այն երևոյթը, որ ուսանողների յարաբերու-  
թիւնները այդ հանդամանքների շնորհով լարվում  
էին հասարակութեան հետ...  
Դա կարծէք սկիզբն էր այն բանի, որ յետոյ  
իր ի դէպ և բին հաւատարմի մնացող երկուս-  
տարդութիւնը միշտ խոյս տար և թշնամական  
ղիւրդ ունենար դէպի հասարակութիւնը... Եւ  
ուսումնական, որ այդ թշնամական զիջքը սո-  
վորական է իր իղէպիներին հաւատարմի եր-  
կուստարդութեան մէջ մի կողմից, և իր սովորու-  
թիւններին գերի հասարակութեան մէջ մի կող-  
մից...  
Բայց բանը նրանումն է, որ իղէպիներին հա-  
ւատարմի երկուստարդութիւնը աւելի շուտ է օղ-  
ջնում, քան թէ հասարակութիւնն է իր սովոր-  
ութիւններից ձեռք վերցնում:

Այդ տխուր հանգամանքին շատ է նպաստում  
այն հանգամանքը, ինչ որ յիշատակեցի յիշող ու-  
թիւնն և բին մէջ: Ընկերական ամուր կեանք  
չը կար մեր ուսանողութեան մէջ. չը կար ու-  
րեմն այն հնոցը, որտեղ կարողանային մշակվել  
հաստատ մտքեր, դաղափարներ և հասկացողու-  
թիւններ: Մենք մեր ունեցած իղէպիների և մըտ-  
քերի հետ էլ չէինք կապված, այլ կպցրած էինք  
թուրքով, Ֆրազներով, խօսքերով... Եւ

ի բնէ պահպանողական Պրուսիան ընթա-  
նում էր իր ամբողջ պատմութեան ժամա-  
նակամիջոցում՝ ժամանակակից ոգու պա-  
հանջներին համեմատ, ճանաչելով այդ  
պահանջների անհրաժեշտութիւնը երկրի  
բարօրութեան համար:

Գերմանական այժմեան երկուստարդ  
կայսրը, ինչքան էլ անձնապէս հակակրու-  
թիւն զգար դէպի երկրի քաղաքական  
ինքնավարութիւնը, դէպի պարլամենտա-  
կան և սահմանադրական սիստեմը,—այնու  
ամենայնիւ պրուսիացի լինելով, չէ կա-  
րող պրուսական Հօհենցոլերնեան տան ա-  
ւանդական քաղաքականութեան դէմ ըն-  
թանալ և ինքն այս օրերս արտայայտեց  
այդ ճշմարտութիւնը հետևեալ խօսքերով.  
«Ես պէտք է մտնեմ ազդի ներկայացու-  
ցիչներին, որովհետև ներշնչված եմ ժա-  
մանակակից ոգով»:

Չիլոմներ անլ ժամանակակից ոգու  
պահանջներին, ինչպէս սուսում է պրօֆէ-  
սոր Մօրէստով իր «O Germania» դրքի  
մէջ՝ պրուսական Հօհենցոլերնեան տան  
մշտական, աւանդական, պատմական դէպի-  
զըն էր, նշանաբանն էր:

Եւ այժմեան գերմանական երկուստարդ  
թագաւորը ցոյց է տալիս, որ հաւատա-  
րիմ է մնում իր պապերի քաղաքական ա-  
ւանդութիւններին:

Գ. Ա.

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ՄԻ ԳԻՉ ՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵՆՔԻՆ

Մեր ընտանիքի յատկութիւններից մէկը, կամ  
ինչպէս սուսեցնելը ասում են, ազգային յատ-  
կութիւններից մէկը,—բաժնաւորութիւնը է  
գործել և մեր գործընտրում, և այդ էլ գլխաւորա-  
պէս հայ մանկավարժների շնորհով, որտեղ դպրոցի  
մէջ արտայայտում են մեր ընտանեկան կեանքի  
տղի յատկութիւնները: Ուրիշ երակացութեան  
չէ էլ կարելի գալ, եթէ ուշադրութեամբ հետե-  
ւենք այն բոլոր գանգամներին և տեղեկութիւն-

կեանքի մէջ մտնելու առաջին քայլին մենք բա-  
ժնակցանք և բաժնակցում ենք մեր նախնիին գա-  
ղափարներից և ձգտումներից: Հաստատ գաղա-  
փարի տէր ուսանողը շատ անգամ հալածվում է  
նոյն իսկ ուսանողութեան մէջ, իսկ մենք հայ  
ուսանողներս, մեր կողմից կեանքով, մեր  
գաղափարի նման մտքերով աւելի ևս թուլաց-  
նում էինք այն ոգին, որը կարող էր մարմին և  
արիւն դարձնել ամեն մի երկուստարդի մէջ այն  
բողբոյ, ինչ որ նա լսում էր համարարանի ամ-  
բիւնից և չըջապատող շրջաններից:

Եւ ինչու էր թէ ինչպէս շատերի «բերանը  
ցամաքում էր», երբ յիշում էին թէ պէտք է ա-  
ւարտեն, պէտք է կեանք մտնեն, և պէտք է ապ-  
րեն, հէց այդպիսի ինքնաուսուցութեան քայլ-  
ներին իմ ուսանող—ընկերներից շատերը մոռա-  
նում էին իրանց բարձր ձգտումները... ապագայ  
հարուստ, խաղաղ և շաւլ կեանքի տեսարանը  
տրոփեցնում էր շատերի սիրտը: Գեռ վերջին  
կուրսում եղած միջոցներում, իմ ընկերներից  
շատերը, ես լաւ յիշում եմ, սկսում էին նամա-  
կազրութիւններով և շողոքութիւններով բա-  
րեկամանալ իրանց հայրենի քաղաքի կամ երկրի  
մեծամեծներին, զօրք մարդկանց և զիլը ունե-  
ցողների յետ, որ գան մտնեն նրանց թիկ տակ  
և նրանց շնորհով աւելի աջողութիւն ունենան  
իրանց կարիերիստական ձգտումներին մէջ: Մեր  
մէջ կային մի քանի ուսանողներ, որոնք մի ժա-  
մանակ սկսեցին թղթակցել և գրել մի քանի  
այնպիսի հայ հրատարակութիւնների մէջ, որոնց  
մասին նրանք առաջ մեծ ատելութեամբ էին խօ-  
սում, և այն էլ այն նպատակով, որ վերջումը  
դրանց խմբագիրներին կամ կուսակցների միջո-

ներին, որոնք ստացվում են թէ գաւառներից և  
թէ նոյն իսկ Թիֆլիսի դպրոցների վերաբեր-  
մամբ:

Մեր օրիորդական դպրոցների մէջ համարեա  
շարունակաբար երևան են գալիս ներքին ինտ-  
րիգներ, խառվութիւններ վարժուհիների մէջ,  
կուսակցութիւններ և ուրիշ այդպիսի, եթէ կա-  
րելի է ասել, հակադպրոցական երևոյթներ,  
որոնց հիմնական պատճառը միմիայն այն պա-  
ռաւական բանասանքներն են, որոնցով, իբրև  
մի կտրուկ դէնքով, դպրոցի մէջ գործողները  
կուսում են միմեանց դէմ, միմեանց դարձու-  
կամ թէ այս և այն վարժուհուն կասկածելի  
դարձնելու, և աշակերտների և հասարակու-  
թեան աչքում վայր դրելու համար...  
Ամեն մի դպրոցում, ուր կայ կեանք և գործին  
ծառայելու ջերմ ցանկութիւն, կարող են լինել  
անսամաձայնութիւններ վարժուհիների կամ վար-  
ժապետների մէջ, բայց այնպիսի անհամաձայնու-  
թիւններ, որոնք վերաբերում են կամ դպրոցի  
ուղղութեան, կամ մանկավարժական մի խնդրի,  
կամ դաստուրութեան եղանակին, և կամ վերջապէս  
այս և այն առարկայի դաստուրութեան և այլն:  
Այդ տեսակ բուն դպրոցական—մանկավարժական  
տարաձայնութիւնները շատ անգամ կարող են  
ծագել այնպիսի դպրոցներում, որտեղ գործողնե-  
րը մեքենաներ չեն, այլ գործին դիտակցաբար  
ծառայող և իրանց համոզմունքի ու մտքերի տէր  
մարդիկ, լինեն դրանք վարժուհիներ թէ վարժա-  
պետներ: Եւ այդպիսի դէպքերում թէ դպրոցի  
պատիւը և թէ մանկավարժական ապարիդի  
վրա գործող խրաքանչիւր վարժուհու և վարժա-  
պետի կողմէր պահանջում է դպրոցական—ման-  
կավարժական հարցը անձնական հարց չը դարձ-  
նել, կուսել հակառակորդի հետ ագնաբար, նե-  
րքի միջոցներով և բացարձակ կերպով:

Տարաբաղաբար, այդ տեսակ տարաձայնու-  
թիւններ չեն մեր դպրոցներում ուսուցչական  
խմբի մէջ ծագած կուսակցները և տարաձայնու-  
թիւնները,—որոնք անպակաս են,—և յատկապէս  
մեր օրիորդական դպրոցներում, որտեղ մեծ մա-  
սամբ վարժուհիներ են գործում. բոլոր կուսակցը  
և անխորթութիւնները սկսում են անմիտ բաժ-  
նով տեղ ստանան և աջողութիւն ունենան:  
Մեզանից շատ շատերը պատրաստվում էին  
սպրելու համար Շատերի համար գաղափարը  
մի դիմակ էր՝ իղէպիստ ընկերներից չը հալած-  
վելու համար: Եւ այժմ կեանքի մէջ տեսնում եմ  
իմ ընկերներից շատերին. նրանք զանազան ա-  
պարեղներ են ընտրել. դարձել են բժիշկ, փա-  
տաբան, բանկիր, ուսուցիչ, շինօձիկ, աւանդա-  
կան և տեսուչ: Հարկերից մէկի մէջ չը կայ  
նախնիին գաղափարի կտորը: Ամեն բան մոռաց-  
ված է իստում և նրանց հետ, նրանք երբեմն  
ծիծաղում են անցեալի վրա, իսկ երբեմն էլ, երբ  
անմեղ քայլեր են պատահում, յիշում են մի  
քանի վայրկեանով ուսանողական իղէպիները, ե-  
րկուստարդութեան ձգտումները, և այն էլ կար-  
ծէք միայն յիշելու համար...  
Այդպէս են մեր ամեն տեղի ուսանողները. ա-  
մեն տեղ, շատ քիչ զանազանութեամբ, նոյն ե-  
րևոյթներն են կրկնվում հայ ուսանող երկուս-  
տարդութեան մէջ: Այդ երևոյթները սփոթել չեն  
Այդ գրում ենք, իսկ հասարակութիւնը այդ տես-  
նելով սկսել է հեղինորէն ծպտալ...  
Շատ անգամ ինքն հասարակութիւնն է կոտ-  
րում երկուստարդութեան լաւ ձգտումները: Բայց  
այդ հանդամանքը չը պէտք է ուղղել հրապար-  
ակելու: Ամեն մի նոր գաղափարի իրագործելը  
կուս է պահանջում. իսկ այդ կուս համար պէտք  
է պատրաստվել... Եւ տարիներ անցնելուց յե-  
տոյ, ես այժմ համոզվել եմ, որ ուրիշ կերպ լի-  
նել չէ կարող...  
Նախ. Ուս.

### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

#### ՆԱԽԿԻՆ ՈՒՍԱՆՈՂԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Երբ հանում էր ներկայացման ժամանակը  
այնքան ուսանողների և հասարակութեան յա-  
րաբերութեան ժամանակը, մեր մէջ նշմարվում էր  
կենդանութիւն և ուրախութիւն, որտեղ շու-  
տով փոխվում էին նախատիքի և պարտաւանքի:  
Մէկը մեղաւորում էր մեզ, որ մենք քաղաքավարու-  
թեան ամենատարրական կանոններից զուրկ ենք,  
միւսը պնդում էր, որ բարձր նպատակով հան-  
դանակած փողը ձեռնոցների վրա ենք վա-  
նում, և այլն և այլն:

Ուսանողը, տեսնելով այսպիսի անբնական և  
անտանելի յարաբերութիւններ, ենթարկվելով  
անպատուութիւնների և անվայել վարմունքների,  
դեռ համարարանի շէմքից դուրս չանցած՝ ատե-  
լուութիւն էր տածում, և կոտրած սրտով ինքն էլ  
ստուգում էր դէպի հասարակութիւնը: Նա դեռ  
կեանք չը մտած՝ կեանքից խորշում էր, նա ու-  
սում էր աւանում, մարտեւելով չքաւորութեան  
դէմ, ուսման ծարաւը լիովին չէր յազնցնում, չը  
զաննելով շրջապատողների մէջ ոչ մի սխիթարութիւն  
և ոչ քաջալերութիւն. նրա թարմ և մատաղ սիր-  
տը, որ շատ անգամ լողում էր ցանկութիւնների  
և նպատակների ուղիւնստում, սկսում էր հիւ-  
սովալիլ, հանդիպելով այսպիսի արգելքներին և  
անբնական յարաբերութիւններին, և ահա իր ի-

բաժանորդներով և դպրոցին միանգամայն անվայել խնորհներով...

Կասկածելի լուրեր տարածել վարժուհու վարքի մասին, ստույգ ցերեզվարդութեան և վարժարանի յարաբերութեան վրա, անվայել կերպով քարոզարեւ հակառակորդ վարժուհու ամենամարմինը քայլը, ոչ մի ստոր, կեղտոտ բամբասանք չը խնայել թէ հասարակութեան մէջ և թէ շատ ընտանիքներում այս և այն վարժուհուն արատաւորելու համար, — այդ բոլորը միմիայն անձնական պատճառներով գրոված, — ահա մեր օրերորդական դպրոցներին անվերջանալի խռովութիւններն սկիզբը և նոյն իսկ պատկերը...

Այդ կողմից, պէտք է ցաւելով խոտովանել, մեր վարժուհիները, որոնք յանձն են առնում դպրոցական գործը զեկամարտիկներ՝ ըստ ամենանկողինը կրթականի զատարարականութեան գործը, շատ էլ հետադարձ ցնցումներով անորոշուից և այն ընտանեկան հասկացողութիւնները, որոնց մէջ բամբասանքը ընդունված է իբրև մի սուր պէտք և մի սփոթիչը դարձնուող չնային և աւելի բարձր պահանջներ չունեցող մեր իրական դպրակարգի մէջ։ — Այդ բանում նոյն իսկ մեր վարժուհիները, որոնք իրանց զաղափարներով և մտքներով արմատականապէս պէտք է տարբերվին իրանց անկիրթ սեռակիցներին, աննշան բացառութեամբ, շատ էլ հետադարձ ցնցումներով և նախանձելի դիրք չեն բռնել։

Դպրոցը ինքը պէտք է սոր և աւելի համակրելի օրինակ տայ ընտանիքին, այն էլ մեր ընտանիքներին, ուր բուն ևն դրել շատ սոցիալ սովորութիւններ։ Վեր օրերը կանուս և ուսումնարանները իրանց վարժուհիներով նոր հոտանք պէտք է մտցնեն ընտանիքի մէջ, և ոչ թէ արտայայտեն ընտանիքի ազդեցականութիւնները, ապա թէ ոչ այլ կը նշանակէ առաջ գնալու փոխարէն՝ յետ գնալ...

Խ. Մ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մարտի 18-ին

Ներկայ թեմականի մայրս ամուսն լրանում է Երևանի թեմական հոգևոր դպրոցի արդի հոգաբարձուների գործունէութեան եռամեայ ժամանակամիջոցը։ Հետևապէս լինելու են նոր ընտրութիւններ։ Բայց որ ընտրութիւն ասվածը լոկ խօսքով չը լինի, այլ կատարվի և գործով, մեր սրբազան պարսքն ենք համարում վաղուց մեր քաղաքացիների ականջներին թմբուկ դարձնել ընտրութիւնից նրանց սթափելու համար։

Գպրոցական գործը առաջնակարգ անհրաժեշտութիւն պիտի կազմի մեր կեանքի մէջ։ Եթէ այսօր մեզանից ամեն մէկը գրեթէ ամենայն օր ակնատես վկայ է ամեն տեսակ տխուր, ապականիչ, աւերող պարագաների, անտարակոյս գլխատարազայն պատճառը կրթութեան բացակայութիւնն է։ Թող դարձնաւ յնչեք մեր քաղաքացիներին արդէն այլ ևս լուսարանութեան անկարծառ այն ճշմարտութիւնը, որ այդպիսի անվարժարու կըրթութեան գործի բարոյագրումն է։ Ուրեմն մեր հասարակութեան ամեն մի բանիմաց, արտացաւ անդամի առաջնակարգ մտածման և հոգացողութեան առարկան պէտք է լինեն մեր զբաղընները։ Ով այժմ անուշադիր-անտարբեր է դէպքի կրթական գործը նա անխելահաս է ըստենու իր բարոյականի, իր կեանքի բարեփոխվելու ստոյգ ճամբան։ Ամեն մի խելովը զլինի, մարդ սեպուհ պարսք պիտի համարի սթափեցնելու այս կէտի վերաբերմամբ թմբունքին, այս կէտի վրա սեռեւ տարու ամենի ակնկալու հայեացքները, այս կէտի վրա կենտրոնացնելու ամենի ձգտումները, նպաստները, նուէրները, գործերը։

Մեր ժամանակակից կրթական գործի Յուզայ, առաջադիմութեան թշնամի, հասարակական կեանքի բարոյական սպանիչ պիտի համարվեն ու ճանաչվին այն անձիկը, որոնք իրանց անձնական կեղտոտ ձգտումներին, անգրապ կսին զոճացումը անուշադիր վատթարն անհնում մեր կրթական գործի, մեր գպրոցները օրապահիկը, որդրանի հասցրել նուազեցնելու, կտրելու։ Սերտի ցաւով պիտի ասենք, որ մեր Երևանը բաւական հարուստ է այդքորինակ հրէշներով։ Թուզանքով կրթական գործի եղեռնագործներով։ Չը նայով որ կրկանը բազմապէս, նախնապական քաղաք է, այնու ամենայնի կարող չէ պարճնայն ոչ իր քաղաքին գպրոցներ թուով, ոչ նրանց ապահովեցանով վիճակով և ոչ էլ հասարակական որ և է բարենպաստակ աչքի ընկնող

այլ հաստատութեամբ։ Այս տարի բացվեց Կ. Հ. Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղը ընկած է միայն չնչին առճիկ ստացող դասակարգի վրա, վաճառականները հեռու են պահուած իրանց կօպիկները...

Թողնելով մեր քաղաքի կրթական գործի ճշրգրիտ նկարագիրը մի այլ անդամի, այժմ մեր նպատակն է յատկապէս քանի մի խօսք ասել թեմական դպրոցի առաջիկայ հոգաբարձական ընտրութիւնների առիթով։

Յիտան ձիգ տարի մի քայլի վրա շարունակ չլիտ ու առաջի խաղ խաղալով, մեր թեմական դպրոցը (ինչպէս այդ նկարագրված է «Յիտանականի» մէջ), միանգամայն մոռացման անուշադիրութեան էր դատապարտված մեր հասարակութեան կողմից և իր այդ միօրինակ չլիտ ու առաջի խաղով ծաղրականին էր հասել, մինչև որ վերջին տասնեակ տարիներում քանի մի եռանդուն գործիչներ կարողացան փոքր մի շունչ, կենդանութիւն պարզելով նրան, իր կաշկանդված վիճակից ազատել և հասարակութեան թէկուր փոքրամասնութեան ուշադրութեան արժանացնել, մինչև որ վերջապէս ներկայ հոգաբարձուների օրով այդ դպրոցն իր ամբողջութեանը հասնելով այսօր ամենայն կերպով արժանի է, որ հասարակութիւնը բաց անի իր քննակոյտը աչքերը և զիտակ քայլերով մտենայ իր այդ միակ յուսովի հաստատութեանը։

Այսօր թեմական դպրոցն ունի 6 Նիմական դասատուներ, այնտեղ աւանդվում են նոյն առարկաները և նոյն ծրագրով, ինչ որ Երևանի 300-ի չափ աշակերտներ։ Ուրեմն անհրաժեշտ է, որ հասարակութիւնն այնպիսի հոգաբարձուներ ձեռքը տայ այդ հիմնարկութիւնը, որոնք արդարև կարող է խելահաս լինէին կառավարելու, որոնք դպրոցի, աշակերտի, տեսչի, ուսուցչի յարգը, դիրքը, նշանակութիւնը թէ հասկանալ և թէ ճանաչել ու գնահատել կարողանային, որոնք հասարակութեան համակրութեան արժանացած լինէին իրանց գործերով։ Մթթէ կրկանից իրանց որդիներին առաւել սիրելի, առաւել թանկ ընտանիքի համար։ Ինչու, հոգացէք, օգնեցէք ձեր դպրոցներին, որ խնամած, օգնած լինէք ձեր որդիներին։ Խելքի կէտք, միջ մտածի միայն մի քանի ժանդոտ կօպիկներ թողնել ձեր որդիներին ժառանգութիւն, որ նրանք հաղթարու մի տեսակ անպետանութիւնների վրա վատնեն, փչացնեն ու ձեր յիշատակը, ձեր գերեզմանը, չափորեն, որպիսի օրինակներ, փառք Աստուծոյ, դպրոցը կան ամենին աչքի առաջ։

Մեր դպրոցներն ընդհանուր կառավարութիւնը կենտրոնացած է հոգաբարձուների ձեռքում, իսկ հոգաբարձու ընտրող հասարակութիւնն է։ Հասարակութիւնը երբէք իրաւունք չունի տրանջալու, գնահատելու թէ դպրոցները արդիւնք չեն տալիս, երբ ինքը խղճով ու խելով չէ մերձեցել հոգաբարձական ընտրութեանը։ Հասարակութիւնը իրաւունք չունի բամբասանել, դայրանալու, որ դպրոցների օգտին տրված նուէրները, փոքր աննպատակ են գործածվել, երբ ինքը հետաքրքրութեամբ ու արտացաւութեամբ չէ մէջ մտել հոգաբարձուներ ընտրելու կամ նրանց ներկայացրած հաշիւները ստուգելու։ Հասարակութիւնը իրաւունք չունի զփոխ լինելու, որ դպրոցի տեսչը, ուսուցիչները ոչինչ չեն չինում, արդիւնք չեն ցոյց տալիս, որ անյարմար են իրանց պաշտօնին, երբ ինքը դպրոցին չէ տուել այնպիսի հոգաբարձուներ, որոնք զիտանային արժանաւոր տեսչին, ուսուցչին, վերակացուն անարժանեցրից չուկել, դատել, որ սարուց տարի աշխատէին աւելի լաւ ու փոքրածառ ուսուցիչներ վարձել, խուսել զօրեղացնել և ոչ թէ միայն է ձանրի և տիկը ընկնելով ամեն տեսակներով խճողել։ Հասարակութիւնը իրաւունք էլ չունի մեղադրելու քահանայներին, որ իրանց գլխու պատգամաւորներ են ընտրում, երբ իշխանութեան հրամանով չունում են օրը, տեղը, ժամանակը, որ հաւաքվին պատգամաւորներ ընտրելու, բայց ժողովուրդը ոչ առաջին և ոչ երկրորդ հրաւերներին է ուշադրանում։ Ինչու հասարակութիւնը իր իրաւունքները ուրիշն է տալիս։

Վերջապէս անցածն անցել է, գէթ այսուհետև արթուն լինե՛ք, մանաւանդ որ դպրոցի վիճակն ու կերպարանն էլ փոխվելով առաւել լրջմիտ ուշադրութեան և հոգաբարձութեան առարկայ է դարձել այժմ։ Ինչպէս լսել ենք արժանաւատ

արդիւրից՝ հոգևոր իշխանութիւնն արդէն կարգադրութիւններ անելու վրա է, որ կատարվեն օրերուս եկեղեցական պատգամաւորների ընտրութիւնները, որ այս վերջիններն էլ ժամանակին ժողովին հոգաբարձուներ ընտրելու։ Քաղաքում կայ 5 եկեղեցի (Նորք քաղաքամասինը չը գլխունք ինչու դուրս է մնացել այդ թիւի միջից)։ Աստուգաբար ընտրվում են ժողովրդից վեց-վեց պատգամաւոր ամեն մի եկեղեցուց, իբրև քաղաքի ընդհանր և հասարակութեան բարեացակամ, մինչև մեր ներկայ յոգաբարձու ընդհանուր կերպով ժողովրդի անտարբերութեան և մեր կրթական գործի դրանով ընկնելու վերաբերմամբ քանի մի խօսք ասելուց յետոյ, ցանկանում ենք և խընդրում, որ իւրաքանչիւր քահանայ ամենայն զգուշութեամբ ու ճշգրտութեամբ իմաց տայ իր բոլոր ծխականներին պատգամաւորներ ընտրելու օրը և ժամանակն ու տեղը Յանկանում ենք և յորդորում, որ ծխականներն, ի սէր իրանց որդիներին, ամենայն պատրաստակամութեամբ անուշտ պարտաւոր համարեն այն ժողովը գնալու և խղճի մտքը ու խելահասութեամբ պատգամաւորներն ընտրելու, պատգամաւորներ, որ լինեն զպրոցասէր, անաչառ, մարդասնայ և խղճաւոր, որպէս զի սրանք էլ իրանց կարգին գործունայ, արժանաւոր, բարեխղճ հոգաբարձուներ ընտրեն։ Թող հասարակութիւնը միջամտի, իր ձեռքն առնի իր որդիներին կրթարանի գործը։ Հասարակութեան պարտաւորութիւնն է մտածել ու հոգալ այդ մասին։

Հ. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսկից մեզ գրում են, որ այժմ այնտեղ մի քանի շրջաններում սկսել են խօսել Մէլքիսեդէկ եպիսկոպոս Մուրադեանին Սխի կաթողիկոսական դահի համար ընտրելու մասին։ Վերջերս թուրք լրագրիչները գովաւանական յոդուածներ սկսեցին հրատարակել Մէլքիսեդէկ եպիսկոպոսի մասին։

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ, «Երևանի թեմական դպրոցի հոգաբարձութիւնը, ինչպէս լսել ենք, որոշել է առաջիկայ ապրիլի 23-ին կատարել դպրոցի յիսնամեակի հանդէսը։ Եթէ կան շքանորակութեան արժանի կատարած գործեր ներկայ հոգաբարձութեան օրով, անտարակոյս ամենից զլլաւորը այն է, որ մանրամասն հաշիւ է ներկայացրել հայ հասարակութեանը դպրոցի յիսուն տարեկան անցնալի վերաբերմամբ իրաւոյս ենք որ առաւել մանրամասն ու ճիշդ հաշիւ կը ներկայացնել յարգելի հոգաբարձութիւնը Երևանի հասարակութեանը և իր եռամեայ գործունէութեան վերաբերմամբ։

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են, «Շաղկունք գիւղը գտնվում է այստեղից 6—7 վերստ հեռավորութեան վրա։ Այդ գիւղի հարուստներից մին, որը վաշխառութեամբ էր պարապում, մի կուժ լի արձավ դրամով պահում էր իր դարձանանդուն Ասում են որ 1200 բուրոց աւելի դուրմար կար կփի մէջ, մեծ մասամբ Նին արձավ աբասիներով։ Մի գեղեցիկ օր պարոնը իր փողով լի կուժը դատարկած է գտնում և կասկած է յայտնում թէ գողացողը իր ծառաներից մէկն է, որը միշտ դարման էր կրում այդ տեղից։»

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են, «Տեղիս սրբազան առաջնորդը մեծ-պատի շքարթ երկունքը փոփոխակի բոլոր եկեղեցիներում, իսկ կիրակի երկունքը Ս. Սարգիս եկեղեցու մշակութեանը քաղաքի է խօսում։ Յաւալի է միայն որ ժողովուրդը շատ քիչ է յաճախում այդ զգացված և գեղեցիկ բարոյներին։»

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ որ այս րօպէին ցորինը Երևանի քաղաքում վաճառվում է՝ խալվարը 34-ից մինչև 37 բուրլի։ Մթթները թանկ են։ Հաջի լիտրը 36 կօպէկ արժէ, ոչխարի մսի ֆունտը 10 կօպէկ։

ԹԻՒՍԻ Ս. Գէորգ մայր-եկեղեցու երեցիփոխան, պ. Նարոյ Միջօնեանց, ուղարկել է մեզ իշխալ եկեղեցու հաշիւը, որը և տպում ենք «Մշակի» ներկայ համարի յայտարարութիւնների բաժնում, և բացի սրանից նոյն պ. Միջօնեանց գրում է մեզ և հետևեալը։ «Յարգելի լրագրիչ անցնալ տարեկան 133-օրը համարում տպված էր մի լուր

իրեն թէ ես հաշիւ չեմ ներկայացնում Ս. Գէորգ եկեղեցու ծխականներին։ Այդ առիթով պատու ունեմ յայտնել, որ ես վարելով իշխալ եկեղեցու երեցիփոխանի պաշտօնը ամբողջ 16 տարի, ամենայն տարի ներկայացրել եմ մանրամասն հաշիւ իմ ընտրողներին, տպագրել եմ 14 տարեկան հաշիւները հայոց պարբերական մամուլի մէջ (տես «Արարատ», 1888 թ. II տետրակ), և մի քանի անգամ էլ հրատարակել եմ ներկայացրել, սակայն ժողովրդականները յայտնելով իրանց գոհունակութիւնը, չորս անգամ են ինձ վերադարձնել Երևանի տարեկան մարտի 2-ին հայր գործակալը կարգաց անցնալ տարեկան մտադրի և ծախսի հաշիւը, որը աւելորդ չեմ համարում քաղաքաւորներու աշխատի «Մշակին», խնդրելով տպագրել իր էջերից միմեւ։»

ՇՈՒՇՈՒՅ, հայոց Բարեգործական ընկերութեան ճիւղի նախագահից ստացաւք 10 բուրլի յօդուած Րաֆֆիի մահաբանի կառուցման և հետեւալ նամակը. «Նորբերուս Շուշում վախճանվել է Գոյթլզով գիւղի ընտանիք Մեյրան Աթաջանեան, որը կենդանութեան ժամանակ կտակել է 100 բուրլի հետեւալ կերպով բաժանելու համար. 25 բուրլի բարեգործական ընկերութեան տեղիս Յիւզին, 25 բ. էլքիսեդէկի վանքին, 25 բ. Տաթևի վանքին, 15 բուրլի Գոյթլզով գիւղի եկեղեցուն և 10 բ. հանգուցեալ Բաֆֆիի գերեզմանի վրա մահաբան կանցնելով համարս Վերջին գումարը, 10 բուրլին, հանգուցեալի ազգականների յանձնարարութեամբ, ընկերութիւնը սրա հետ ուղարկում է ձեր խմբագրութեանը։»

«Նիւստային գործակալութիւնը» հեռագրում է մեզ, որ Պետերբուրգի բուրսայում մարտի 21-ին բաւական յոգիչ լուր տարածվեց, այն է որ կառավարութիւնը զիտաւորութիւն ունի թոյլաւորել խաղարկութեան տոնակները յետաձգութեամբ ծախել միմիայն այն բանկային գրասենականներին, որոնք կը ներկայացնեն կառավարութեանը 50,000 բուրլի գրաւական և որոնք իրանց գործունէութեան մէջ կենթարկվին վարչական-պօլիցիական վերահսկողութեանը։ Կառավարութեան այդ տեսակ կարգադրութիւնը, եթէ իրագործվի, անշուշտ մեծ համակրութեամբ կընդունվի բոլոր բարեմիտ անձանց կողմից, քանի որ, ինչպէս մեզ յայտնի է, մասնաւոր բանկային այլ և այլ գրասենականները անասելի զիջումներ են Կրծում ներքին փոխառութեան և այլ տոնակները յետաձգութեամբ ծախելով, խարելով միամիտ մարդկանց ու նրանցից իւրաքանչիւր տոնակի համար անասելի դուժարներ կորուցնել, իր թէ օրինական տոկոսներ վերցնելով, տոնակները յետաձգութեամբ ծախելու ժամանակ

Մարտի 21-ին, պ. պ. Լասալի և Շարլի Քրանսիական օպերետային խումբը ներկայացրեց Թիֆլիսի թատրոնում «Կորնելիւսի զանգալները» յայտնի օպերետը, երաժշտութիւն Պլանկետի խաղի և երգեցողութեան ensemble շատ գեղեցիկ էր, սիրկին Մարգար մեծ հնգգործիւն ունեցաւ Դէրմէյնի դերում և ինքն պ. Լասալ ամբողջ կառավարիչ, ձեր Գասպարի դերում։ Պարոնը ճշմարիտ արտակարգ դրամատիկական տաղանդ ունի։ Տիկին Գրետո շատ գեղեցիկ և վայելուչ էր Սերպուլետային դերում։ Թատրոնը գրեթէ լի էր։ Պ. Լասալին ներկայացման ժամանակ մատուցվեց մի պոսի հասարակութեան կողմից։ Մարտի 22-ին նոյն խումբը ներկայացրեց «Շինիլը» պիէսան, հեղինակութիւն Նեկիլինի և Միլիլի, երաժշտութիւն Բուլաբիւի։ Այդ պիէսային զլլաւոր, այն է կիսունի կօրնիցային դերը կատարեց համակրելի տիկին Լասալ, որը, ինչպէս միշտ, իր չնորհալի, կենդանի, խելացի խաղով և դուրեկան երգեցողութեամբ հիարեց ամենքին։ Հիւնդաթիւ, 23-ին մարտի, ներկայացվեց թիֆլիսցիներին արդէն ծանօթ «La fille de madame Angot» օպերետը։

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են որ վերջին օրերը եղանակները տաքանալով և երբեմն էլ յորդ անձրևներ գալով՝ շրջակայ սարերի վրա ձիւնը կատարելապէս հալվում է, այնպէս որ Բաղդան գետը այն ատիճան վարարել է, որ կատարած կերպով իր ափերին խիւլով, գոռու-դուռում է վազում իսկ Արարատեան դաշտում տեղ տեղ լճեր են երևում, որից հետևեցնում են թէ այդ դաշտով անցող գետերը նմանապէս վարարելով, ծածկել են դաշտի շատ տեղերը։

Գէորգ պատերազմական հերոս ամենահայրենասէր (տես թանկ և սուրբ հայրենասիրտ օգուտ տեսնելու է նախ, և 100 ր. 25 Ժընէլի հայ ուսանողներին ստացանք մի փառաւոր ընծայ, այն է թանկագին շրջանակի մէջ գրված՝ «Մարտի» խմբագրի կենդանագիրը, որը նկարել է այնտեղի հայ ուսանողներին մէկը: Ամբողջ պատերազմի մեծութիւնը 1 բառակրթութիւնն է: Այդ տեսակ համակրթութիւն հայ ուսանող երիտասարդութեան կողմից մեզ համար թանկ է:

Կ. Պօլսից մեր ստացած մի քանի մամուլեր նամակներէ քաղում ենք հետևեալ լուրը: «Թերթը քահայոց պատերազմը թափախելով պատմական է այն հրամանագրին, որ մեծ-վզիկը ուղարկել է պատերազմին, հրամայելով որ հայոց դպրոցները մէջ արգելիլ հայոց պատմութեան ուսումը և նրա տեղ օսմանեան պատմութիւնը դաս տրվի: Այդ թափախումը, որը գրվեց մարտի 11-ին, շատ լաւ է խմբագրված: Պատերազմը յայտարարում է թէ օսմանեան ազգի պատմութիւնը հայոց դպրոցներին մէջ արգէն վաղուց է որ աւանդուած է մեծ հոգաբարձութեամբ, իսկ հայոց պատմութեան մասին ստուծ է թէ հայոց ազգը օսմանեան պատմութեան մէջ առանձին մարմին կազմելով իր լեզուով, կրօնով, ցեղով, հաստատութիւններով և անցեալով, քանի որ հայերը հին քաղաքակրթութիւն են ունեցել, որը սերտ կերպով կապված է հայոց եկեղեցական պատմութեան հետ:— անհարկն է հայ աշակերտներին չուսուցանել իրանց ազգային և եկեղեցական պատմութիւնը, որը առանձին կազմակերպուած պատմական այդ մարմին պատմութիւնն է: Ոչ մի տեղ, ոչ մի պատմութեան մէջ, որտեղ ապրում են հայերը, աւելացնում է թափախումը, արգելված չէ հայոց պատմութեան աւանդելը հայոց դպրոցներում: Ռուսներ, աւելացնում է պատերազմը, ինչ որ մի կերպ կարելի չէ եպարքոսական հրամանը իրագործել, ուստի իր այդ պատմական նախնայաբար խնդրում է կրթական նախարարի միջոցով հաղորդել մեծ-եպարքոսին:»

Մայրաքաղաքի լրագիրներում կարգում ենք որ մարտի 16-ին Պետերբուրգի «Петербургскій Листок» լրագրի խմբագրութիւնը տանց այդ լրագրի 25-ամեակը: Այդ քսան և հինգ-ամեակի առիթով ճաշկերպով եղաւ և ապա խմբագրութիւնը, տպարանատէրը և թղթավաճառը նուիրեցին 1000 ռուբլի գումար «կարօտ բանասերների օժանդակելու» ընկերութեան դրամակազմին:

Լսում ենք որ թիֆլիսի Ներսիսեան դպրոցի տեսուչը ընտրված է: Գլխաւորը հոգաբարձական վերջին նիստում առաջարկված մի քանի կանգնողներին ընտրվեց մի ոմն Սպենդիարեան, զրիմից հայ: Նա իրաւաբան է, Ղրիմի Միսթրոպոզ քաղաքում է ապրում և պարագում է փաստաբանութեամբ: Չարմանալի հակում ունի մեր Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը՝ ընտրել միշտ այնպիսի անձնաւորութիւններ, որոնք ոչ զբն յայտնի չեն, և որոնց ինքն հոգաբարձութիւնն էլ չէ ճանաչում... Այնպէս, անձանօթը միշտ աւելի փայլ աւելի հեղինակութիւն ունի հայերի, ուրեմն և մեր թիմական դպրանոցի հոգաբարձուների աչքում C'est le charme de l'inconnu (անյայտի հրապոյրը) ինչպէս ասում են ֆրանսիացիք...

Մեզ հաղորդում են, որ կովկասեան հայոց մի քանի վերին աստիճանի աղողածներ, մասնաւոր այն, որը ներկայացնում է կայծակի փայլատակումը: Տաղանդաւոր նկարիչը շուտով այդ պատկերները պէտք է տանի Բերլին:

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

ՀԱՆՐԱՊԵՏԱԿՈՒՆ ՖԻՐՄԱՆՍԻՆ

Հեռագիրը Փարիզից արտատուր լուրեր սկսեց հաղորդել:— հանրապետական կառավարութիւնը հալածանք է սկսել իր հակառակորդների դէմ, «Հայրենասէրների միութեան» անդամները խուզարկուած, ձերբակալուած և դատի են ենթարկուած, հալածանք է սկսվել և Բուլանժէի դէմ, մտքերը յուզվել են, կուսակցութիւնները վերին աստիճանի գրգռուած են, զօրքին հրամայված է պատրաստ լինել, Բուլանժէ փախել է Բեդիա և այլն և այլն:

Աւելի հեռու գնալ պէտք չէ, քանի որ այդ էլ բաւական է համոզելու համար, որ Փարիզում այս բոլորի մի տեսակ քաղաքական շարժում կայ, որը, եթէ նայելու լինենք մի փոքր պսի-միտական աչքով, կարող է բռնկվել և ծանր հետեանքներ ունենալ:

Գա զարմանալի են չէլ լինի. զարմանալի չի լինի, ասում ենք, որովհետև վերջին տարիները ընթացում Գրանսիան այնքան յուզվեց, այնքան իրարանցում ունեցաւ, այնքան տատանվեց և սպառնալիքների ենթարկվեց, որ կարծէք անհրաժեշտ է, որ նա մի անգամ էլ ուժգին կերպով թափախար իրան, և թօթափելով իր վրա ծանրացող ոյժերը, մի անգամ ընդ միշտ բանայ իր ազատ առաջադիմութեան պետական և տնտեսական կենտրոնը, շարժուր: Սակայն ներկայ հանգամանքներում այդ բոլորը կարող է և ոչ հանկուտի հետեանքներ ունենալ հանրապետական Գրանսիայի համար, և այդ պատճառով շատ էլ սիրովից տպաւորութիւն չեն թողնում այն բոլոր անցքերը, որոնք կատարվում են այս բոլորի Գրանսիայի սահմաններում:

Մենք չենք խօսում հանրապետութեան թշնամիների գործողութիւնները վրա, որոնց մասին խօսելը աւելորդ էլ է, բայց չէ կարելի մասնաւոր չանել հանրապետական կառավարութեան բռնած զիրիք վրա: Հանրապետական կառավարութիւնը, ինչպէս պարզ երևում է Փարիզից եկած տեղեկութիւններից, վճռել է շատ խիստ լինել և խիստ միջոցների դիմելով՝ ուժաթափ անել հանրապետութեան թշնամիներին: Հէնց այս բոլորի փարիզում, թէ հասարակաց կարծիքի մի մասը և թէ քաղաքական շրջաններում մի խումբ յայտնի մարդիկ, հաւանութիւն տալով կառավարութեան այդ ընթացքին, յորդորում են նրան աւելի խիստ և կտրական միջոցներ ձեռք առնել հանրապետութեան թշնամիներին ջարդ ու փշուր անելու համար:

Բայց նոյն հասարակաց կարծիքի, նոյն մամուլի և նոյն քաղաքական գործողները մի ուրիշ մասը դէմ է կառավարութեան ձեռք առած խիստ միջոցներին և այն միտքն է յայտնում, որ հանրապետական կառավարութիւնը, որը հեռու պէտք է մնայ բռնութեան դիմելուց, և որը հիմնված է ամենքի ազատութիւնը յարգելու սկզբունքի վրա, չը պիտի դիմի այնպիսի խիստ, ճնշող և հալածող միջոցներ, որոնք դէմ են հանրապետութեան նոյն իսկ հիմնական բնույթներին:

Հանրապետութեանը պատիւ է բերում, որ նա այդքան ժամանակ, մի քանի տարիներ շարունակ, ոչինչ արտատուր և ճնշող միջոցներ չը դիմեց իր թշնամիներին: նոյն իսկ Բուլանժէի ուժաթափ անելու համար, չը խախտելով կուսակցութիւնների ազատ մրցութեան ազատութիւնը:

Այժմ հանրապետական կառավարութիւնը սկսեց և փոքր առ փոքր շեղվել իր այն ընթացքից, որով նա մի քանի տարի է արդէն յարգանքի է արժանացել բոլոր կուսակցութիւնների, կողմից իր ձեռք առած խիստ և ճնշող միջոցներով աւելի համաժողովը կուսակցական մամուլի մի մասի յայտնած այն կարծիքին, որ գործելու այդ եղանակը չէ համապատասխանում հանրապետութեան զգաւաւորին:

Լսում ենք, որ թիֆլիսում շուտով բացվելու է հայերեն ժողովրդական գրադարան: Այդ համակրելի ձեռնարկութեանը ցանկանում ենք կատարեալ աջորդութիւն:

Մեզ հաղորդում են, որ Ախալցխայի դպրոցներում պատահած վերջին խառնակութիւնների պատճառով արձակված են տասն ուսուցիչ, որոնց մի մասը զրկված է թիֆլիսի թեմում վարձատրութիւն անելու իրաւունքից:

Մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ Երևանի նահանգում, գլխաւորապէս Հին-Նախի-Չլանի գաւառում ապատան գտած մի խումբ միւրզան Եր, որոնք ինքնակոչ փաստաբանների դեր են կատարում, շարունակում են անարդել կերպով խաբել միամիտ ժողովրդին և դատարկել նրանց դրաման: Չլանցորդութիւնը մի լաւ ստիկ է եղել այդ միջոցների համար, որոնք խաբելով խեղճ գիւղացիներին, թէ կազատեն նրանց որդիներին ղինուրական ծառայութիւնից, անարդին դուստրներ են պոկում միամիտ ժողովրդից: Այդ գիւղական ցեղերի վնասակար շորձուհեութեան դէմ ոչինչ արգելք չը կայ, մասնաւոր որ օրինաւոր փաստաբաններ համարեա թէ չը կան շատ տեղերում:

Ստացանք Վիեննայից, տիկին Աղէլ Մանիկ (հանգուցեալ էմանուէլ Մանիի ամուսինը), մի նամակ, որը նա խնդրում է տպագրել «Մշակուած» և որի մէջ նա յայտնում է թէ ստանալով թիֆլիսից ուղարկած փողերը, նա սրտաղին և անկեղծ շնորհակալութիւն է արտայայտում թէ թիֆլիսի, թէ Բաթումի և թէ միւս բոլոր քաղաքների մէջ ապրող այն անձանց, որոնք նիւթական օժանդակութեամբ մարդասիրաբար օգնեցին իրան և իր որը մասնակիներին Յարգելի տիկինը խնդրում է մեզ յայտնել և իր շնորհակալութիւնը յատկապէս պ. Ստանիսլավ Չարախչիանովին, որը այդքան աշխատեց հանգանակութիւնը գրելու բերելու համար:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան անդամները հրաւիրված են ներկայ լինել ընդհանուր ժողովին, որը կայանալու է երկուշաբթի, մարտի 27-ին, երեկոյան 7 1/2 ժամին: Հերթական գործերը վերջացնելուց յետոյ ժողովը կը լսի պ. Վալդամովի ղեկուցումը՝ այգեգործական միջոցների առևտուրը լաւացնելու համար մի ընկերութիւն կազմակերպելու վերաբերմամբ: Ներկայ կարող են լինել և կողմնակի անձինք:

Արտասահմանի հայոց լրագիրները հաղորդում են Կ. Պօլսի հայ էֆէնդիների պարագլուխ Սիմոն պէյլի հետեալ խօսքերը, որ նա ասել է խառն ժողովի վերջին նիստերից մէկում: «Աղաչելու է կայս. կառավարութեան որ շնորհ ընէ մեր բարձրագոյն վարժարանները փակել, տերութեան վարժարանները պարտաստ են անոնց տեղը լեցնելու. մեզ համար մի միակ այդուքն սովորելու 1—2 ժողկոց լինի, բաւ է. ծախքէ այ ազատ կը լինիք և ծաղկոցներէն կենդանի դիւրութիւն կունենան իսկոյն մտնելու արժեանի վարժարանները, որոնք ղոններ բաց են անխափր Ն. Վահագն փառութեան ամեն հպատակաց և որը մեր վարժարաններէն շատ աւելի լաւ կը սովորեցնեն Սամ. Էնզուն յարակից ձեւերով:»

Մեզ հաղորդում են, որ Բաթումի հայերը մրտադրութիւն ունեն այդ քաղաքում բանալ կովկասեան Բարեգործական ընկերութեան տեղական մի ձեւը: Կարելի է կարծել, որ մտադրութիւնը իրագործելու համար Բաթումի հայերը չեն լաւ նայի իրանց ջանքը և եւանդը:

Յայտնի նկարիչ Ալվազովսկի, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, նկարել է բաւական շատ նոր պատկերներ, որոնց մէջ կան

**ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԳՈՅ ՀԱՅՍՏԱՆԻՑ**

Կ. Պօլսից, մարտի 9-ից, արտասահմանի հայոց լրագիրներին գրում են հետևեալը: «Արդէն յայտնի է, թէ արքունի պալատին մէջ կայ յանձնաժողով մը որ Հայոց խնդրով կը զբաղի: Տէրվիլ փաշա և Արթին փաշա այդ յանձնաժողովը զըլխաւոր անդամներն են. կայսրը մասնաւորապէս այս երկուքին յանձնարարած է ծրագիր մը պատրաստել Հայոց համար լինելը բարեկարգութեանց: Կը լսենք թէ երկու փաշայնքը միացած խորհած են որ Ասիական մի քանի գաւառներու հայ կառավարիչներ զրուին, որով բարեկարգութեանը ի գործ դրուած կը համարուին: Այս նպատակաւ պատրաստուած է ծրագիր մը որուն տեղեակ է նաև Պատրիարքը:»

Ալինից գրում են Կ. Պօլսի լրագրներին: «Այնպէս բարձանց վրայ անաղին քար մը կը գտնուի, որ շղթայներով կապուած է և այս պատճառաւ կը կոչուի Չինձիլիլ Թաշ: Ալինի կը գրեն թէ վերջին օրերս շղթաները կտրելով քարաժայռը վար զլորեր և քաղաքին մէջ տասն չորս տուներ աւերեր է. այդ արկածի պահուն 12 մարդեր վիթխարի քարին ներքև մնալով մեռեր են:»

Յաւալի է նոյնպէս և Քլիլի Օրոր գիւղի զըժ-բաղուցիները, որի մասին հետեալ տեղեկութիւններն են հաղորդում այնտեղից: «Այս գիւղի արդէն շինուած էր այնպիսի գետնի մը վրայ որ ընդ միշտ շարժումն մէջ կը գտնուէր, սակայն այս շարժումն այնքան անզգալի և դանդաղ կերպով կը կատարուէր որ գիւղացիք կրնային իրենց ընկալարանները ժամանակ առ ժամանակ նորոգելով ապահովել անոնց հաստատութիւնը: Բայց անցեալ տարւոյ դարձանային յորդանոսան անձրոց պատճառաւ Օրորէ քառորդ ժամու կափ հեռի գտնուած քանի մը լիճեր յորդելով՝ այդ անկայուն գետինն այնպիսի շարժման մէջ դրած են որ ամբողջ գիւղն իւր եկեղեցիով, մզկիթով և բոլոր ընկալարաններով յաւեր գարձաւ ֆլունուցի կը հաստատեն այժմ թէ նոյն անկայուն գետնին վրայ չէ կարելի բնակութիւն հաստատել: և գիւղն այլուր փոխադրել հարկ է, սակայն գիւղացիք անկարող են վերադառնիլ շինելու այդ գիւղին: Պօլսի Պատրիարքաբանը կայս. կառավարութեան նպատակ խնդրած է՝ գիւղին վերաշինութեան համար:»

Երզրումից գրում են, որ գաւառական ժողովը միաձայն առաջնորդական տեղապահ է ընտրել Գրիգոր քահանայ Արծնեանին, որը մի քանի անգամ արդէն այդ պաշտօնը վարել է:

Կ. Պօլսի կենտրոնական իշխանութեան կողմից Եւրոպա գնացած պատուիրակ Գուրեան վարդապետի մասին հետեալ տեղեկութիւններն ենք գտնում արտասահմանի լրագիրներում: «Գուրեան վարդապետի առաքելական պաշտօնին շըրկաւորմամբ հասած լուրերը միևնաբար կան են. ամենուրեք սառնութիւն և թշնամանք կը գտնուէր տարակոյս չունիլով թէ ի Մարտի և Մանչեստր և ի Լոնդոն և նա մի և նոյն ընդունելութեան պիտի արժանանայ. վարդապետի զրկողները՝ Կ. Պօլսի էֆէնդիները այս եղած ընդունելութեամբ կրնան միայն իրենց պատիժը գտնել:»

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

— Բէլգրադից գրում են, որ Սերբիայում արդէն բնակարան են պատրաստում Նատալիա Թագուհու համար: Թէ որտեղ կը բնակվի նա, այդ որոշ յայտնի չէ առ այժմ, բայց վճռված բան է, որ Նատալիա պիտի գայ Սերբիա, այդտեղ բնակվելու համար:

— Այս օրերս Բէլգրադում, ինչպէս այնտեղից գրում են, Յանկովի կողմնակիցները նրան հանդիսաւոր ցոյցեր արեցին:

— Կառուցելու գործում, ինչպէս հեռագրում են Վիեննայից, ժողովրդի և զօրքի մէջ կուր պատահեց. կուր պատճառը այն էր, որ ժողովուրդը ցոյցեր արեց զինուորական նոր օրինացի դէմ: Կուր ժամանակ շատերը վերադարձան, որովհետև հետև զօրքը զէնք էր գործածում, իսկ ժողովուրդը զօրքի վրա քարեր էր գցում:

— Հերբելում է այն լուրը, որ իբրև թէ Միլան Թագաւորը Օղեսա պիտի գնայ: Հերբելում է նոյնպէս և Ալէքսանդր մանուկ Թագաւորի Ռուսաստան գալը:

— Հռոմի քաղաքական շրջաններում հետաքրքրութեամբ սպասում են Ֆրանսիական նախկին մինիստր-նապագահ Ֆլոկիէ Հոսո գալուն:

— Ինչպէս երևում է Վիեննայից եկած տեղե-

կուրսները, սերբիական դահի խնամակալները...

Վիլնիւմ կայսրը մամակեցից իշխան Ռիս...

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱՐԻԶ, 22 մարտի: Իր պրոկլամացիայի մէջ...

ՔՈՒՆԻԱՊԵՏ, 22 մարտի: Ներկայացուցիչների...

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 22 մարտի: Ամերիկական սե...

ՔՈՒՆԻԱՊԵՏ, 23 մարտի: Մինիստրութիւնը հը...

ՓԱՐԻԶ, 23 մարտի: Մինիստրների խորհուրդը...

ՀՈՒՍ, 23 մարտի: Իտալական աղբիւրներից...

ՔՐԻՍՏԷ, 23 մարտի: Բելգիական կառավար...

ՓԱՐԻԶ, 24 մարտի: «Journal Officiel» լրագրում...

ՔՐԻՍՏԷ, 24 մարտի: Ստեյնի և Էմիլի-փաշա...

ՀՈՒՍ, 24 մարտի: Նէգուսի մահուան լուրը...

ՓԱՐԻԶ, 24 մարտի: Պատգամաւորների ժողովը...

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՎՐԱՍԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹ ԿԻՃԱԿԱՑԻՆ ԿՕՆՍՍՏՈՐԻՍԵՒ...

Վերատեսուէչ բարեկարգութեան եկեղեցիների...

ՆՈՐԻՆ ՍՐԲԱՋՆՈՒԹԵԱՆ ԹԵՄԻՍ ԱՌԱՋՆՈՐԴԻ տնօրէնութեան...

Վերատեսուէչ բարեկարգութեան եկեղեցիների...

ՀԱՅՈՒՆԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՋՈՒԹԻՒՆԸ...

БОЛЬШАЯ ПРЕДПРИЯТИЕ РАСПРОДАЖА СОУБРАТІВ ԱՌԱՋ ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Կենտրոնական զարմատերիական մազաղիւում...

Հանգուցեալ ՍՏԵՓԱՆՈՍ ՊԱԼԱՍԱՆԵԱՆԻ նախկին աշակերտները...

Հ Ա Շ Ի Ի

1888 թի յունվարի 1-ին Թէլաւի Ս. Գեորգ մայր-եկեղեցին...

1888 թի ընթացքում եկեղեցին ծախս է ունեցել...

Մայր հաշիւները հայտնի նման պարզ են ծախսախեղ...

Երեցփոխան Թէլաւի Ս. Գեորգ եկեղեցու Եւզոր Ալմէնանց

ԲԺՇԿԱՊԵՏ

ՎԱՀԱՆ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Ընդունում է հիւանդներին, առաւօտեան ժամը 10-ից...

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԷՔԻԱԹՆԵՐԻ

Հին գերբող գիրքը: Վաճառվում է Թիֆլիսի հայ գրավաճառանոցներում...

Շուտով մամուլի տակ կը մտնի մեր ժողովածուի 7-րդ զիբը...

Լոյս տեսաւ մամուլի տակից և վաճառվում է Կենտրոնական և Կովկասեան...

ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Բարի՛ի արհեստագիտական արքունի ձեւարանի իտալական...

ՆՈՐ ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

Ամերիկական տեսակի վարձով են տրվում և ծախվում են...

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՒԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ...

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԳԵՐՄԱՆԵՐԻՆ-ՀԱՅԵՐԻՆ

Աշխատասիրաց հ. Աւետիք վ. Կոյրաւան, Վիէննա, 1889, Միլիթարեան տպարան

Նոյն գերմաներէն-հայերէն (աշխարհաբար) բառադիրքն (104 թերթ=1667 երես)